«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԱՆԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Դաստիարակ՝ Նորա Դանիելյան

Մանկապարտեզ՝ «Նանե մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Բարոյական դաստիարակությունը ավագ նախադպրոցական տարիքում.....4-8
Պարապմունք.....9-11
Կարծիք մեթոդիստի.....12
Եզրակացություն.....13
Գրականության ցանկ. 14

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեման է՝Բարոյական դաստիարակությունը որպես սանի արժեքային համակարգի ձևավորման միջոց:

Թեմայի արդիականությունը: Բարոյական դաստիարակությունը մի ամբողջական գործընթաց է, որն ուղղված է աճող սերնդի կողմից վարքի կանոնների և նորմերի տիրապետմանը:

Բարոյական դաստիրակությունը իրականացվում է անձնավորության կենսագործունեության ամբողջ ընթացքում:

Բարոյական դաստիարակությունը բարդ պրոցես է, որի հաջողությունը կախված է բարոյական դաստիարակության համակարգից, նրա տարբեր գործոնների ճիշտ համակցումից, անձի կյանքի, գործունեության և վարքի խելացի կազմակերպումից:

Բարոյական դաստիարակության անդրադարձել են Սենեկան,Դեմոկրիտը,Արիստոտելը, Ջ Լոկը, Բելինկսին, Խ. Աբովյանը և այլոք:

Թեմայի ուսումնասիրության **նպատակ**ն է ներկայացնել բարոյական դաստիարակությունը որպես սանի արժեքային համակարգի ձևավորման միջոց:

Ելնելով առաջադրված նպատակից առաջադրվել են հետևյալ **խնդիրներ**ը՝

1. ուսումնասիրել համապատասխան գրականություն
2. ներկայացնել բարոյական արժեքների էությունը
3. ներկայացնել բարոյական դաստիարակության մեթոդներն ու միջոցները

Աշխատանքի առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան բարոյական արժեքներն են:

Ուսումնասիրության օբյեկտը բարոյական արժեքների համակարգն է նախադպրոցական ավագ տարիքում:

Աշխատանքի վարկածն է ենթադրվում է, որ բարոյականության մասին թեմաներով զրույցների շրջանակում զարգանում է սաների արժեքային համակարգը:

1. Բարոյական դաստիարակությունը ավագ նախադպրոցական տարիքում

Սույն հետազոտական աշխատանքում անդրադարձել ենք ավագ նախադպրոցական տարիքում բարոյական դաստիարակության կարևորությանը, որի արդյունքում երեխաների մոտ զարգանում և ձևավորվում է բարոյական գիտակցություն և սոցիալական զգացմունքներ:

Բանալի բառեր. բարոյական դաստիարակություն, բարոյական գիտակցություն, սոցիալական զգացմունքներ, ավագ նախադպրոցական տարիք:

Նախաբան: Նախադպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի. ընկալում և զգում է ամեն մանրուք, միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին: Երեխան շրջապատող աշխարհն ընկալում է տպավորությունների և կերպարների միջոցով, որոնք խոր հետք են թողնում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում, ուստի շատ կարևոր է հենց նախադպրոցական տարիքից նպաստել երեխաների բարոյական դաստիարակությանը և սոցիալական զգացմունքների զարգացմանը:

Բարոյական դաստիարակության հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ: Ուշադրության են արժանի խորհրդային մանկավարժության ներկայացուցիչների՝ Վ. Ի. Լոգինովայի և Պ. Գ. Սամուրոկովայի՝ նախադպրոցականի բարոյական դաստիարակության մոտեցումը, որն առավել կարևորում է բարոյական գիտակցության զարգացման անհրաժեշտությունը, թև այդ դեպքում արդյունքները հաճախ տեսանելի չեն: Բարոյական դաստիարակության խնդիրները, ըստ Վ. Ի. Լոգինովայի և Պ. Գ. Սամուրոկովայի, իրականացվում են որոշակի տրամաբանությամբ և բաժանվում են երեք խմբի հետևյալ հաջորդականությամբ.

- բարոյական գիտակցության զարգացման խնդիրներ,
- բարոյական վարքագծի ձևավորման խնդիրներ,
- բարոյական զգացմունքների և հարաբերությունների հաստատման խնդիրներ:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունը, սկզբունքորեն ընդունելով Վ. Ի. Լոգինովայի և Պ. Գ. Սամուրոկովայի դասակարգման մոտեցումը, առավել կարևորում է խնդիրների իրականացման ոչ այնքան հաջորդականությունը, որքան կազմակերպման եղանակը :

Ժամանակակից դասակարգմամբ բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

- խնդիրներ, որոնք ուղղված են բարոյական դաստիարակության մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը,
- խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ և նպաստում են երեխայի մեջ բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը:

Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ: Եթե նախկինում հասարակությունն առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման ներկա ժամանակահատվածում շեշտադրվում են այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը (բարությունը) և հանդուրժողականությունը,

ձեռներեցությունը և կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, ստեղծագործական ընդունակությունները և կրեատիվ-ստեղծարար դիրքորոշումը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները, քաղաքացիական հատկությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը:

Անհատակողմնորոշիչ գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երջանիկ լինելու զգացողության զարգացմանը, որն արտահայտվում է երեխայի բարձր տրամադրությամբ, սեփական ուժերին վստահությամբ և հաղորդակցվելու ու համագործակցելու պատրաստակամությամբ :

Լ. Ի. Բոժովիչը նշում է, որ հասուն տարիքում բարությունն ու մարդասիրությունը անձնային ներքին զգացողություններ են, իսկ նախադպրոցական տարիքում՝ երեխայի հոգեկան ակտիվության դրսևորումներ, որոնք մղված են գործողությունների և հարաբերությունների հաստատման :

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով,բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:

Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:

Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:

Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ:

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և,

ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին:

Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական սովորությունների և վարքագծի ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է բնութագրել իբրև բարոյական կամ բարոյականության որակ: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, այն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության:

Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ և վեր են ածվում սոցիալական զգացմունքների: Այդպիսի հատկություններից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը: Աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նաև նշված զգացմունքներ, որոնք համալրում են նրա բարոյական որակը: Բարոյական դաստիարակության երկու կողմերն էլ ենթադրում են մանկավարժի ակտիվ մասնակցություն և աջակցում: Մանկավարժը բարոյական դաստիարակության ընթացքում հանդես է գալիս «սոցիալական ուղեկցողի» դերում:

Բարոյական դաստիարակությունն իրականացվում է որոշակի միջոցներով: Նախադպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով: Գեղարվեստական միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել մանկական գեղարվեստական գրականությունը: Հեքիաթների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա: Հեքիաթների հերոսական կերպարները ընդօրինակման արժանի բարոյական նմուշներ են:

Բարոյական դաստիարակության ընթացքում անգնահատելի է բնության դերը, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը:

Բարոյական դաստիարակության միջոց է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ խաղային, աշխատանքային, կերպարվեստային, կառուցողական և ուսումնական: Սակայն Մ. Ի. Լիսինան և Ա. Գ. Ռուզսկայան մանկական գործունեության ձևերից հատուկ նշանակություն են տալիս մեծահասակների հետ հաղորդակցմանը և ինքնուրույնությանը հասակակիցների հետ հարաբերվելու ընթացքում:

Եվ, ի վերջո, բարոյականության հզոր միջոց է երեխային շրջապատող մթնոլորտը, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը:Այսպիսով, բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք

կարևորագույն հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ:

Նշված հատկանիշներն օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

2.Պարապմունք

2.1 Պարապմունք <<Ընկերասիրություն>>

Տարիքը՝ 5-6 տարեկան ավագ խումբ

Թեմա՝ <<Ընկերասիրություն>>

Տեսակը՝ զրույց

Նպատակը. զարգացնել երկխոսելու կարողությունը, մտքերը կապակցված, քերականորեն ճիշտ արտահայտելու կարողությունը, դաստիարակել բարոյական որակներից ընկերասիրություն, լավ արարք գործելու ցանկություն: Հարստացնել բառապաշարը ժլատ, առատաձեռն բառերով: Սովորեցնել տարբերել լավը վատից:

Նախապատրաստական աշխատանք. Ընթերցել Կ. Ուշինսկու <<Երկու այծ>> պատմվածքը:

Անհրաժեշտ նյութեր. Սյուժետային նկարներ

Ընթացքը.

Խթանման փուլ

Ցուցադրե՛լ սյուժետային նկար, որում տղան թաքցնում է ընկերոջից իր խաղալիքը, իսկ ընկերն իր կոնֆետը մեկնում է նրան:

Քննարկե՛լ.

- *Ի՞նչ կասեք առաջին տղայի մասին: (Նա ժլատ է, ոչ ընկերասեր)*
- *Ի՞նչ կասեք երկրորդ տղայի մասին: (Նա առատաձեռն է, ցանկանում է ընկերություն անել)*

Առաջարկե՛լ երեխաներին մտածել անուններ կերպարների համար և նրանց դիմել անուններով:

Իմաստի ընկալման փուլ

Զրույցը սկսե՛լ «Ովքե՞ր են ձեր ընկերները» հարցով: Խնդրե՛լ երեխաներին ասել իրենց ընկերների անունները և պատմել նրանց մասին: Օգնել ուղղորդող հարցերով.

- *Սիրում եք ձեր ընկերներին: Ինչո՞ւ:*
- *Զիջում եք նրանց ձեր կոնֆետը, խաղալիքը:*
- *Ի՞նչ խաղեր եք խաղում ընկերներով:*

Անդրադարձ կատարել նկարին և հարցնել.

- *-Դուք ինչպե՞ս կվարվեիք:*
- *Ինչու լավ չէ ժլատ լինելը: (ընկերներ չես ունենա, մենակ կլինես, ոչ ոք քեզ հետ չի խաղա, տխուր կլինի)*
- *Ինչպիսի՞ն պետք է լինեն ընկերները: (համերաշխ, զիջող, չկռվեն)*

Կշռադատման փուլ

Անցկացնե՛լ «Նեղացած թուփը» դիդակտիկ խաղը: Խաղը նպաստում է ջերմ հարաբերությունների ձևավորմանը:

Երեխաներից մեկը նստում է շրջանի կենտրոնում. կատարում է նեղացած թփի դերը, որի մի քանի ճյուղը կոտրել են: Երեխաները քնքուշ խոսքերով փորձում են հանգստացնել և մխիթարել նրան:

Այս խաղը կարող ենք փոխարինել «Հիշիր իմ անունը», «Եթե այո՝ ծափահարիր, եթե ոչ՝ դոփիր» խաղերով, որոնք, բացի իրենց հիմնական դիդակտիկական խնդրից, ունեն համերաշխ մթնոլորտի ձևավորման ներուժ:

Այսքանով ավարտին հասավ մեր ինտերակտիվ պարապմունքը: Պարապմունքին ներկա գտնվեց մանկապարտեզի մեթոդիստը և միջին խմբի դաստիարակը:

Կից պարապմունքի նկարները:

Պարապմունքի ավարտին իր գրավոր դիտարկումը ներկայացրեց մեթոդիստը:

Կարծիք մեթոդիստից

Այսօր ավագ խմբի դաստիարակ ընկեր Նորան անցկացրեց պարապմունք ուղղված՝ բարոյական դաստիարակությանը, ընտրելով՝ <<Ընկերասիրություն>> թեման: Նա իր առջև նպատակ էր դրել երեխաների մեջ սերմանել, դաստիարակել ընկերասիրություն, լավը ու վատը տարբերակելու կարողություն, հարստացնել երեխաների բառապաշարը և զարգացնել կապակցված խոսքը: Պարապմունքն անցկացվեց խմբասենյակում, ընկերական միջավայրում: Ակնհայտ էր երեխաների ակտիվությունը, ազատ և անկաշկանդ կարողանում էին պատասխանել իրենց տրվող հարցերին: Մեր օրերում բարոյական դաստիարակությունը իր մեծ տեղն ու կարևորությունն ունի կրթադաստիարակչական գործընթացում: Կարող ենք այսօրվա մեր պարապմունքը համարել հաջողված: Պարապմունքի շնորհիվ դաստիարակն հասավ իր նպատակին: Երեխաները սովորեցին, թե ինչ է ընկերությունը, բարությունը և ազնվությունը, տարբերակելով առատաձեռնությունը՝ ժլատությունից :

Եզրակացություն

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության համակարգի միասնական բաղադրիչներից են՝

- Բարոյական գիտակցության ձևավորումը
- Բարոյական զգացումների, հմտությունների ու սովորույթների, բարոյական վարքագծի ձևավորումը:

Հարկ է նշել, որ բարոյական դաստիարակության գործընթացը չի կարող իրացվել երեխայի անձի սոցիալական զարգացումից դուրս:

- Այս տարիքում իրենց հասակակիցների հետ ունեցած հարաբերություններում նրանք ցուցաբերում են բարյացակամություն, հոգատարություն, փոխօգնության պատրաստակամություն: Մեծերի և հասակակիցների հետ փոխհարաբերություններում ակտիվորեն է ընթանում երեխայի սոցիալական զարգացումը, ինքնաճանաչման հետ ձևավորվում է նաև ինքնագնահատականը: Երեխան դրական ինքնագնահատականի դեպքում պատրաստ է ռիսկի դիմել և իր նախաձեռնությունը փորձել նորից ու նորից, քանի որ ինքը հավատում է իրեն:
- Իրականացված պարապմունքի ընթացքում երեխաների մոտ ձևավորվեց բարոյականության արժեքային համակարգը: Ստեղծելով պայմաններ բարյացակամության դրսևորման համար, խրախուսելվել է հասակակցի հետ ընկերանալու, օգնելու փորձերը օգտագործելով խաղային իրադրություններ:
- Դաստիարակը պետք է ուշադրություն դարձնի նախ և առաջ երեխայի հույզերին, քանի որ երեխաների բարոյական դաստիարակությունը անխզելիորեն կապված է երեխայի հուզական ոլորտի, նրա ապրումների հետ:

Գրականության ցանկ

1. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ:. Ուսումնամեթոդական ձեռնարկ. Երևան 2015թ.
2. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ<հոդված):Պոնոմարենկո Ի. Ռ., Ասմարյան Ք. Ժ., Խուգեյան Ա. Վ.